

ՓԱՐԻԶԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՆԱՄԱԿ.

Կոստանդնուպօլսոյ մէջ ազգիս երեսփոխան (յօղօֆէր) Մեծապատիւ Մարկոսեան Գրիգոր Էֆենտիէն հետագայ նամակն ընդունեցանք առ Գերապատիւ Սարգիս վարդապետ մեր ուղղեալ, զոր մէջի ազգասիրական եւ մարդասիրական գեղեցիկ զգացմանցը համար արժան կը համարիմք անբերի հրատարակել :

« Կոստանդնուպօլիս, 30 օգոստոսի 1857 :

« Արժանապատիւ Հայր,

« Յերջանիկ օրեանտի, յորում գովելի սեր առ ազգն՝ դարձուցեալ զձեզ (զոյգ ընդ Տ. Գաբրիելի եւ Տ. Ամբրոսեայ վարդապետաց) ի ծոց հայրենի եկեղեցւոյ, այսինքն առաւել մերձեցուցեալ զարժանապատուութիւնսդ առ մեծագոյն կամ բուն մասն հայրենակցաց՝ զպատուական անձինս ձեր ի ծառայութիւն նմին նուիրեաց, կամք էին իմ եւ պարտք իսկ գրութեամբ եւս (որպէս սրտիս) շնորհաւորել զգալուստ ձեր եւ շնորհն ունել ձեզ երեցունցդ՝ վասն անգին ծառայութեանդ, որ մեծամեծ բարիս ունի ծնանել յօգուտ ազգիս : Բայց բազմութիւն ազգասիրաց որք ի բոլրակցութիւն անապարեցին (որպէս եւ արժանն էր) ընդ Գերապատիւ Տեառնդ, երկիւղ երեսելոյ ցանկացող ի ձեռս բերելոյ անարժանաբար զանուն ազգասիրի, եւ միանգամայն երկիւղ գրաւելոյ բերեսս զփոքրիկ անկիւն մի ի զանճարանի մտացդ, եւ հետեաւ բար յափշտակելոյ զբանի ինչ ի բանկազին վայրկեանիցդ եւ խռընդոտն լինելոյ օգտակարագոյն զբաղմանցդ, յետս կացուցին զգրիչ իմ ցայսօր յասպարիզէ քարտիզի :

« Իսկ արդ՝ փնտք էին, տեսեալ զձեզ զերծ ի մտատանջութեանց որք ի շնորհս ներքին եւ արտաքին բշխմանց յուզելն զձեզ, ազատ միանգամայն՝ բէ եւ մասամբ իւրի եւեր՝ ի դժուարութեանց որք սովորաբար անբաժանելի են ի սկզբնաւորութենէ ամենայն մեծ ձեռնարկութեանց, նա մանաւանդ՝ ուրախս զձեզ՝ ոչ նուազ քան զձեզ՝ այժմ երեսակայեալ ընդ փրկութիւն Տ. Խորենայ վարդապետի ի պապական ստրկութենէ, եւ ընդ ժիր աշխատակցութիւն նորա իւրում Հարգատի՝ ի կրթութիւն հայրենակից մանկտանոյն,

ոչ եւս կարեմ յապաղել ընդ երկար զգրութիւն իմ :

« Ըստ ինքեան գովելի եւ մեծի շնորհակալեաց արժանի եւ անձնանուէր ազգասիրութիւնդ. որով զամենայն ինչ գոհելով եւ յինչ ոչ խնայելով՝ զօգուտ հայրենեաց վերադասեցիր ամենայնի :

Գուցէ ոչ սակաւ դժուարացեալ իցէր ընդ ոչ ժամանումն առ ձեզ անյապաղ բոլորից նպաստիցն, որոց իրաւամբ ակն ունել էր ձեզ բնականաբար յազգես մեծեւս յիրաւի, միոյն եւեր ի մեծատանցն մերոց մարք էր միայնակ տանել ամենայն ծախուց ազգօգուտ ձեռնարկութեանդ, բայց առ ի գրաւել յայն զսիրտս իւրաքանչիւրոց ազգայնոց եւ զամենեսին մասնակիցս առնել արգասեացն յուսացելոց, լաւ եւս համարեցաւ առժամանակեալ նեղութիւն եւ անձկութիւնդ, զիտելով միանգամայն զի քաջութեամբ ունիք համբերել այնմ : Նա զի ոչ մեծ ինչ կարէր համարել յաղբանակ՝ երէ ամենայն դիւրութեամբ եւ հեշտութեամբ ի ձեռս բերէիր զայն՝ առանց դժուարութեանց եւ նեղութեանց որոց տարալորդ ցարդ եւ տանիլ ունիք բերեսս փոքր մի եւս :

« Ժողով խնամակալաց արդեն հասոյց առ ձեզ գումար մի դրամոյ արտաքոյ կարգի : Մարդասիրական ընկերութիւն մի եւս կազմի այժմ վասն առաքելոյ ի վարժարանդ տասնեակ մի աղքատիկ աշակերտաց : Առ երեսելի վիճակս հայաբնակս գրեցաւ ի դիմաց Գլխոյ ազգիս զի իւրաքանչիւր ըստ կարեացն զմի կամ զերկուս աշակերտս տացեն բոշակաւորս : Այսորիկ տնօրէնութիւնք տան մեզ յուսալ բէ նախ քան զլրանալ վեցից ամսոց ամենայն նեղութիւնք ձեր փարատեցին, եւ զպտուղս աշխատանացդ բաղել սկսեսցիր : Են նաեւ ի պատրաստի քանի մի աշակերտք որք յետ քանի մի Եօթնեկաց ուղեւորեցին այդր :

« Ի վերոյ գրելոցս յայտնի տեսանք բէ ոչ ննջեն աստ, ուստի եւ քաջալերեցարձնք : « Որ ծանրաբայլ զնայ անվտանգ զնայ, եւ որ անվտանգ զնայ՝ հեռի զնայ » ասէ առական :

« Մեծաւ ուրախութեամբ լսեմք յամենայն եկելոց այտի այսր զբարեկարգ ընրացս վարժարանիդ զորոց յարատեւութիւն յուսամք լսել միշտ :

